

ՀՏԴ: 929:791.43(479.25)Փարաջանով+929:782.1(479.25)Հովհաննիսյան
DOI: 10.54503/978-5-8080-1555-5-119

Ծովինար ՄՈՎՍԻՍՅԱՆ

*արվեստագիտության թեկնածու, դոցենտ,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
ռեկտորի պաշտոնակատար
tsmovsisyan@yahoo.com*

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՕՊԵՐԱ-ԲԱԼԵՏԻ ԱՆՀԱՅՏ ԼԻԲՐԵՏՈՆ

Հոդվածը լուսաբանում է կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանի և Սերգեյ Փարաջանովի երկարամյա մտերմության և դրա արդյունքում, նաև պրոֆեսիոնալ համագործակցության անհայտ էջերից մեկը՝ «Սասունցի Դավիթ» օպերա-բալետի լիբրետոյի ստեղծման պատմությունը:

Բազմաթիվ աղերսներով են կապված միմյանց երկու արվեստագետների ստեղծագործական անհատականությունները: 1969-ին ծնվեց օպերա-բալետի ստեղծման գաղափարը, և Փարաջանովը գրեց լիբրետո, որը խորհրդային ժամանակաշրջանի գաղափարախոսական արգելքների հետևանքով հայտնվեց կոմպոզիտորի արխիվում:

1976-ին բեմադրված մոնումենտալ օպերա-բալետի պատկերացումները ծնունդ էին առել Փարաջանովի լիբրետոյի գաղափարագեղագիտական լիցքերից: Եվ սա է պատճառը, որ Է. Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» օպերա-բալետն առ այսօր ազգային վիպերգի երաժշտաթատերական մարմնավորման ամենահաջողված օրինակներից է համարվում:

Քանալի բառեր՝ Էդգար Հովհաննիսյան, Սերգեյ Փարաջանով, Սասունցի Դավիթ, էպոս, օպերա, բալետ, լիբրետո:

Ներածություն

Սերգեյ Փարաջանով և Էդգար Հովհաննիսյան... Այս երկու արվեստագետների մուտքը 20-րդ դարի խորհրդահայ մշակութային իրականության մեջ ազդարարվեց իրենց ուրույն նկարագրով, ար-

վեստագետ-մտավորականի առաքելության հստակ գիտակցմամբ, յուրօրինակ գեղագիտական հայեցակարգով, յուրաքանչյուրն՝ իր ասպարեզում թողած հարուստ ստեղծագործական ժառանգությամբ և անջնջելի հետքով:

Հիմնական նյութի շարադրանք

Բազմաթիվ աղերսներով են կապված միմյանցից այնքան տարբեր և, դրա հետ մեկտեղ, այնքան հոգեհարազատ արվեստագետների ստեղծագործական անհատականությունները: Էդգար Հովհաննիսյանի հուշերում Սերգեյ Փարաջանովը հիշատակվում է այն փոքրաթիվ արվեստակից ընկերների շարքում, ում հետ նա կիսում էր իր ամենամիլիարական խոհերը, ում հետ քննարկում էր ստեղծագործական նոր, դեռևս անիրականանալի թվացող ծրագրերը, ում հետ հաճույքով զրուցում էր անվերջանալի թեմաների շուրջ, ում ներկայությամբ իրեն երջանիկ էր զգում...

Տարիների հեռավորությունից անդրադառնալով իր անցյալին՝ կոմպոզիտորը փաստում է, որ իր մտերիմ ընկերների թվում շատ քիչ են եղել երաժիշտները. «Իսկական մտերիմ ընկերներս են եղել Մինասը, Սևակը, Փարաջանովը, Գևորգ Էմինը, Զիմ Թորոսյանը, Վիլեն Գալստյանը, Հակոբ Ոսկանյանը... նկարիչ, բանաստեղծ, ռեժիսոր, բալետմայստեր, ճարտարապետ, - նշում է կոմպոզիտորն իր հուշագրության մեջ և հավելում, - նրանցից յուրաքանչյուրի հետ աննկատելի ու վաղանցիկ երջանկության բերկրալի պահեր են կապվում»¹:

Նույն հուշագրությունից տեղեկանում ենք, որ Փարաջանովի հետ ծանոթությունը սկսվել է Օպերային թատրոնում աշխատելու տարիներին²: «Սիրում էինք այցելել միմյանց: Ինքն էր գալիս թատրոն, կամ ես էի գնում իր մոտ՝ արվեստանոց»:

Կոմպոզիտորի վկայությամբ՝ Փարաջանովն անգամ իրեն առաջարկել է գրել «Նռան գույնը» ֆիլմի երաժշտությունը, սակայն ֆիլ-

¹ Էդգար Հովհաննիսյան. Կյանքս հուշերում 1998, 16-17:

² 1962-1968 թթ. Էդգար Հովհաննիսյանը եղել է Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի տնօրեն:

մի աշխատանքային տարբերակը դիտելուց հետո ինքն այնքան ցնցված է եղել, որ կտրականապես մերժել է առաջարկը, քանի որ ֆիլմն արդեն իսկ «այնքան բովանդակալից էր, որ երաժշտության կարիքն անգամ չէր զգացվում: Ամեն ինչ ասված էր կատարելապես...»³:

Հետո ծնվեց «Սասունցի Դավթի» գաղափարը: Փարաջանովն անձամբ գրեց բալետի լիբրետոն, սակայն այդ համատեղ մտահղացմանը վիճակված չէր իրականանալ: Պատմական իրավիճակը, ամենակարող և զգոն խորհրդային, կուսակցական գաղափարախոսները հասկացրեցին կոմպոզիտորին, որ բալետի լիբրետոն վստահելով Փարաջանովին, նա վտանգում է իր ստեղծագործության հետագա բեմական ճակատագիրը:

1969 թվականն էր: «Սասունցի Դավթի» փարաջանովյան լիբրետոն հայտնվեց գրասեղանի հեռավոր դարակներից մեկում: Սակայն արվեստակից ընկերների մտերմությունը դրանով չխաթարվեց, քանի որ երկուսն էլ գիտակցում էին, որ այդ պայմաններում ժամանակավրեպ էր պայքարը գաղափարախոսական տաբուների դեմ:

Դրան հաջորդելու էին հանճարեղ ռեժիսորի՝ անհեթեթ մեղադրանքներով բանտարկության ողբերգական տարիները, որպես «անցանկալի» արվեստագետ ո՛չ իր կամքով հայտնվելը անգործության վակուումում:


1980-ականների կեսերին Փարաջանովը կրկին Երևանում էր, պարբերաբար միմյանց հանդիպում էին: Սպիտակի ողբերգական երկրաշարժի առիթով Փարաջանովը Էդգար Հովհաննիսյանին նվիրեց իր կոլաժը, որ վերնագրել էր «Լենինականի ճիչը»՝ այն ուղեկցելով ջերմ երկտողով, որն ավարտվում էր «Սիրով ու ակնածանքով» («С любовью и благоговением») խոսքերով:

Սրանք հենց այն խոսքերն են, որոնք ամենադիպուկն են բնորոշում երկու արվեստագետների մտերմությունը, զգացմունքների ազնվությունն ու խորությունը:

Օպերա-բալետի գաղափարին կոմպոզիտորն անդրադարձավ տարիներ անց՝ 1976-ին, արդեն միանգամայն այլ ստեղծագործա-

³ Էդգար Հովհաննիսյան. Կյանքս հուշերում 1998, 16-17:

կան կազմով: Սակայն Փարաջանովի լիբրետոյի կարևորագույն գաղափարագեղագիտական և ոգեղեն լիցքերը սնեցին այս մոնումենտալ երաժշտաբեմական կտավը բանաստեղծական նախահիմքի լուռ, անանուն ներկայությամբ:



Ս. Փարաջանովի «Լենինականի ճիչը» կոլաժը և կոլաժի դարձերեսին

Ս. Փարաջանովի ընծայագիրը:

Պահվում է Է. Հովհաննիսյանի անձնական արխիվում:

Քչերին էր հայտնի այս փաստը, անգամ ամենամտերիմները, մասնագետները չգիտեին, որ Էդգար Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» օպերա-բալետի լիբրետոյի հեղինակն ի սկզբանե եղել է Սերգեյ Փարաջանովը: Կոմպոզիտորի արխիվում, որպես ամենաթանկ մասունք, պահպանվում էր Վարպետի ծեռագրով գրված այդ բացառիկ բանաստեղծական երկը:

Առաջին անգամ այդ մասին տեղեկացա 1990-ականներին, երբ առիթ ունեցա անձամբ շփվելու կոմպոզիտորի հետ, հնարավորություն ունեցա ուսումնասիրելու նրա հարուստ ու բազմաբովանդակ արխիվը՝ «Էդգար Հովհաննիսյան. Կյանքս հուշերում» ինքնակենսագրական հուշապատում-գրքի վրա աշխատելու առիթով: «Սա-

սունցի Դավիթ» օպերա-բալետին նվիրված արխիվային ալբոմներից մեկում պահվում էին լիբրետոյի ձեռագիր էջերը:

Կոմպոզիտորի հետ համաձայնության եկանք, որ լիբրետոն այլևս չի կարող մնալ փակի տակ և անպայման այն պետք էր հանրայնացնել: Առաջին անգամ լիբրետոյի տեքստն ամբողջությամբ հրատարակվեց վերը հիշատակված գրքում, որի կազմողն ու տեքստի հեղինակը լինելու պատիվն եմ ունեցել: Բայց, անգամ գրքի հրատարակվելուց հետո, այն չունեցավ արժանի արձագանք: Գուցե ժամանակներն էին ոչ նպաստավոր: Գրքի ազդորինակը լույս տեսավ 1998 թվականի դեկտեմբերի 30-ին, կոմպոզիտորի հուղարկավորության օրը, տպաքանակը սպառվեց աննկատ՝ առանց աղմկալի շնորհանդեսների:

Փարաջանովյան այս գիտաժողովը հրաշալի առիթ է՝ նորովի անդրադառնալու այս հետաքրքրական փաստին և Փարաջանովի արվեստի գիտակաների շրջանակում ներկայացնելու Վարպետի տիեզերական տաղանդի աննշան թվացող, սակայն գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող այս դրսևորումը:

«Барельеф...

Барельеф – о славе, мощи, красоте и силе Давида...

Барельеф – из серебра, стали и базальта...

Барельеф – о радостях и печалях Давида...

Барельеф – о страстях Давида – страстях Сасунских... страстях Давида Сасунского...

На фоне барельефа Давида возникают герои Сасуна...»⁴:

Լիբրետոն, ինչպես նշեցինք, գրվել է 1969-ին, ռուսերեն է, չափաժո հանգավորմամբ, ձեռագիր է, հենց տեքստի վրա իր՝ Փարաջանովի և կոմպոզիտորի կողմից արված որոշ խմբագրական ուղղումներով: Առաջին տողերից ընթերցողին գրավում է պոեզիայի, թատրոնի, մնջախաղի, կինոյի, կոլաժի զուտ «փարաջանովյան» աշխարհընկալումը:

⁴ Մեջբերումն ըստ Էդգար Հովհաննիսյան 1998, 94: Լիբրետոյի ամբողջական տեքստին կարող եք ծանոթանալ հոդվածի Հավելվածում:

Руконис Серг. Парфянов
1969

Баренсфер...

Баренсфер - о силе, мощи, красоте и силе Вавида...

Баренсфер - из серебра, стали и божества...

Баренсфер - о рожденьи и ласках Вавида...

Баренсфер - о силе Вавида - силе Вавида...
силе Вавида Вавида Вавида...

На фоне Баренсфера Вавида Вавида Вавида...
Вавида...

Вери ожившей, ачившей жившей...
В одно целое с Вавида...
силе и божества...

Вери ожившей свою истину...

истину мощи, красоте, любви, власти...

Вери - творческой в нести, предельной...

Баренсфер Вавида исчезает,

обычной пейзажем Вавида...

Пейзажем Вавида Вавида Вавида...

Вери ожившей, ачившей жившей в Вавида...

Вери ожившей, ачившей жившей в Вавида...

и в тишине Вавида Вавида...

Вавида Вавида...

Բանաստեղծական տողերը սկսվում են հարթաքանդակների՝ բարեկեցիկների նկարագրով: Սա բալետային ներկայացման նախերգանքն է՝ օպերա-բալետի կարևորագույն գաղափարների խորհրդանշական պատկերմամբ, գլխավոր հերոսի փառաբանումը, նրա հույզերի ու կրքերի նկարագիրը հայրենի Սասուն աշխարհի հետ ներդաշնակ միասնության մեջ:

Հետագա շարադրանքում մեկը մյուսին փոխարինելու են գալիս Սասուն աշխարհի հոյակերտ բնապատկերները՝ մերթ

հովվերգական հանդարտության, մերթ՝ հուժկու տարերայնության, մերթ՝ դարձյալ տարրալուծվում եթերային հայեցողականության զրնգացող լույսի մեջ:

Հերոսների գործողություններն ուղեկցվում են Սասնա ժողովրդի կարեկից արձագանքով, ընդմիջվում տարածական, ընդգրկուն «զանգվածային տեսարաններով»՝ ոչ մի պահ չկտրվելով բնության ներդաշնակ ներկայությունից:

Փարաջանովի լիբրետտոն բազմաշերտ է: Այստեղից էլ Էդգար Հովհաննիսյանի երաժշտական մտածողության հետ կարևոր ընդհանրություններից մեկը՝ բազմաշերտ, պոլիֆոնիկ շարադրանքը: Ընդ որում, այդ բազմաշերտությունն արտահայտվում է ոչ միայն բովանդակային առումով, այլև որոշակի արտահայտչամիջոցների՝ ֆակտուրային, դիրամական, տեմբրային՝ վոկալ և նվագախմբային, անգամ ոճական իմաստով: Շարադրանքի ընթացքում բացահայտվում են ոչ միայն հերոսների ներաշխարհը, նրանց հոգեբանական ու հուզական տվյալանքները, այլև նրանց գործողությունները որոշակի իրավիճակներում: Այսինքն, գրական-բանաստեղծական

սկզբնաղբյուրը հնարավորություն է տալիս կոմպոզիտորին տարբեր հանգամանքներում, տարբեր գլխավոր կերպարներին պատկերելու դինամիկ և ստատիկ երաժշտաարտահայտչական նկարագրերով: Երաժշտական նյութի շարժման այս հակադիր միասնության մեջ դրսևորվում է Էդգար Հովհաննիսյանի սիմֆոնիզմը:

Մեծակերտ, վիմագիր վրձնահարվածներում կարելի է նկատել լիբրետտոյի հեղինակի և կոմպոզիտորի գեղագիտության ևս մի կարևոր ընդհանրություն՝ էպիկական մտածելակերպը, որը դրսևորվում է նրանց մակրո- և միկրո- աշխարհներում՝ ամեն անգամ բացահայտելով էպիկականության ընկալման նորանոր շերտերը:

Լիբրետտոյի հակիրճ, սակայն խոսուն տողերում ոչ միայն ծավալվում է գլխավոր հերոսի՝ Դավթի կյանքի հերոսապատումը, որը հյուսվում է մանկության, պատանեկության, սիրո և դավաճանության, պայքարի և ինքնագոհաբերության դրվագների առկայծող հաջորդականություններից: Գրական-բանաստեղծական տեքստը հոգեբանական ու հուզական նոր շերտերով է հագնում՝ զուգահեռաբար, հակադրության կամ համադրության սկզբունքով ներկայացող կանանց՝ Ծովինարի, Խանդութի, Չմշկիկի... վառ ու ինքնատիպ կերպարների շնորհիվ:

Լիբրետտոյի մյուս կարևոր շերտը վերաբերում է նյութական, շոշափելի պատկերային, հնչյունային մտածողությանը: Գրական սկզբնաղբյուրը միանշանակ կամ խորհրդանշական ակնարկներով վիզուալացնում է բեմի, տեսարանի, պատկերի, անգամ հագուստի ձևավորման նյութը: Այսպես, օրինակ՝ «Բարելիեֆ - արծաթից, պողպատից ու բազալտից...», կամ «սավառնում են ճերմակ ամպերը, ճերմակ հոտի նմանվելով...», «զարկվում եմ միմյանց ժայռերը, զարկվում քարերը...», «զարկում են ծռերը քարերը միմյանց...», «ոսկի են հագել Սասնա ջրերը...»:

1976-ին, օպերա-բալետի բեմադրության ընթացքում, «սկզբնական լիբրետտոյի» հեղինակի կարևորագույն գեղագիտական գաղափարադրույթները, պատկերային, գունային ու հնչյունային հիմք հանդիսացան ոչ միայն ստեղծագործության երաժշտական մարմ-

նավորման, այլև բեմական ձևավորման ու գունապատկերային լուծումների համար:

Եզրակացություն

Էդգար Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» օպերա-բալետի մտահղացումը երկու մեծ արվեստագետների մտերմության, արվեստակից մտավորականների հոգեհարազատության և յուրաքանչյուրն իր ասպարեզում անգերազանցելի պրոֆեսիոնալների համագործակցության արդյունք էր: Գրականագետ Լաուրա Մուրադյանի բնորոշմամբ՝ «Դա փարաջանովյան վերացարկված խորհրդանշական պոետիկայի խտացումն է՝ պատկերային մտքի սլացքի պայթուցիկ լիցքով, որ երաշխիք է դառնում էպոսի հեռահար կենսաձևերի նոր իրացումների համար»⁵:

Հայ երաժշտության մեջ էպոսի մարմնավորման փորձերը թեև փոքրաթիվ են, բայց դրանք կան և դեռ կլինեն՝ յուրաքանչյուրն իր տեսակով արտահայտելով իր ժամանակի գեղագիտական պատկերացումներն ու ժանրային ընկալումները:

Էդգար Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» օպերա-բալետն առ այսօր ազգային վիպերգի երաժշտաթատերական մարմնավորման դժվարին գեղարվեստական խնդրի լուծման ամենահաջողված օրինակներից է, և դրա գրավականը հենց Փարաջանովի հեղինակած լիբրետոյի գրական-բանաստեղծական ատաղձն է, որը կրում է 20-րդ դարի մեծ գեղագետի արտառոց ֆենոմենի կնիքը:

Գրականություն

1. Էդգար Հովհաննիսյան. Կյանքս հուշերում, Տեքստը գրի առավ և կազմեց Ծովինար Մովսիսյանը, Երևան, «Տիգրան Մեծ», 1998:
2. Մուրադյան Լ. «Սասունցի Դավիթ» էպոսի թատերգական և բեմական կերպավորումները, Գրականագիտական դիտումներ ժամանակի մեջ (ուսումնասիրություններ և հոդվածներ), Երևան, «Հայաստան», 2021:

⁵ Մուրադյան 2021, 404:

Հավելված

Барельеф...

Барельеф – о славе, мощи, красоте и силе Давида...

Барельеф – из серебра, стали и базальта...

Барельеф – о радостях и печалях Давида...

Барельеф – о страстях Давида – страстях Сасунских... страстях Давида Сасунского...

На фоне барельефа Давида возникают герои Сасуна...

Герои оживают, сливаясь живыми телами в одно целое

С барельефом из серебра, стали и базальта...

Герои заявляют свою истину –

Истину мощи, красоты, любви, мечты...

Другие торжествуют в мести, предательстве,

Торжествуют во лжи...

Барельеф Давида исчезает,

Обнажая пейзажи Сасуна.

Пейзажи Сасунских гор... Сасунского неба...

Герои Эпоса растворяются в Сасунских горах...

Герои Эпоса растворяются в Сасунском небе...

И в тишине возникает Давид.

Давид пастух...

Растворен в тишине... завладев тишиной...

Давид слушает тишину... Давид томится в тишине...

Давид ударяет камень о камень –

Возникают звуки...

... И в возникших звуках отрываются от скал облака...

Отрываются облака малые и большие...

Летят вниз в лошину Давида...

Летят облака, похожие на стада...

И стада, похожие на облака...

Белой массой летели облака...

И навстречу летели белые стада...

И в белом исчезал Давид...

И вновь возникал в белых облаках,
Среди белого стада...
Красота Давида...
Давид укрощал облака... и стада...
И снова бил камнем о камень...
И снова возникал звук...
Укрощенные облака возвращались на скалы...
Стада белой массой вращались у ног Давида...
Давид слушал тишину Сасуна...
От скал базальта, из скал Сасунских
Шли старцы-слепцы...
Безумцы-слепцы... Сасунские безумцы...
Слепцы-безумцы протягивали руки –
Нарывались на скалы...
Нарывались на Давида...
И слепцы Сасуна поведали Давиду...
Поведали печаль...
Печаль Сасуна...
Исчезли горы Сасуна.
Исчезли облака-стада.
Возникло море.
И безумцы били камни о камни...
И пенилось море у ног Давида.
Безумцы закрывали глаза Давида...
... и толкали его в море...
Давид протягивал руки...
И нарывался на скалы...
Нарывался на море...
Нарывался на слепцов...
И нарывался на меч Сасуна...
Цовинар – мать Сасуна – мать Сасуна Цовинар
Держала меч Сасуна – меч,
Похожий на хач и хач, похожий на меч...

Цовинар благословляет Давида-пастуха на подвиг,
Цовинар открывает глаза Давида...
Перед Давидом возникают красоты Сасуна –
Девы, несущие воду...
Они омывают тело Давида водой
Из сосудов Сасуна...
Цовинар закликает Давида-воина,
Призывая к подвигу за землю...
За горы...
За небо Сасуна...
Давид клянется небом Сасуна...
Давид бьет в камни Сасуна...
Безумцы-слепцы бьют в камни Сасуна...
Бьют... бьют... бьют... о камни безумцы...
Взлетают орлы в небо Сасуна...
Как бы в небе Сасуна парит безумец Давид.

Юноша в золоте толкнул Давида...
Четверо юношей, кованных в золото, в страстях
Томились, дрожали, желали...
Давид смотрел на странного юношу...
Толкнул его сам...
Толкнул странный юноша в золоте Давида...
Давид смотрел и уступал... отступал перед юношей...
Юноша в золоте шел на Давида
И готовился сразиться с ним...
Давид поднял юношу на руки...
Потом опустил... снова поднял...
Упали шлем и забрало юноши в золоте...
...и Давид ослеп...
Золотой волос девы, переодетой в юношу...
Не юноша, а дева... Хандут!!!
Олени ластились к ногам Давида!

Волосы! – золото Хандут!
Юноши в страстях томились... изнывали...
Золотом текли воды Сасуна!
Давид томился... Томились олени!
Хандут... сама тянулась к Давиду...
Юноши в золоте... томились в страстях...
Олени рогами толкали Давида...
Рогами толкали олени Хандут.
Давид коснулся грудей Хандут...
Хандут коснулась грудей Давида...
Летели облака вниз в лощину...
Облака, как стада... и стада... облака...
И в белом исчезли суровые скалы...
И белая пена поглотила тела...
В белом томились Хандут и Давид...
Хандут сама поднимала Давида...
Потом касалась ног Давида...
Потом тишина...
Бежали олени... резвились как дети...
Давид, в страстях к Хандут, требует сына!
Хандут, в страстях к Давиду, родила!!!
Сына – омыть в водах Сасуна!
Желания Давида! Желания Хандут!
Назвать сына Мгером!
Желание Давида назвать сына Мгером!
Желание Хандут!
Мгера оmyвает счастливый Давид!
Давид в спину целует Хандут!
Трндез – сасунцы палят пастушьи палки.
Трндез – прыгают сасунцы...
Трндез – прыгает Хандут!
Трндез – прыгают Давид с Мгером!
Трндез – прыгают Давид, Мгер, Хандут!

Давид не заметил, как взлетают орлы...
Бегут олени... и воды шумят!
В небе под облаками – призрак черной тучи...
Потом тишина...
Чимишник рукою ребенка натягивает тетиву...
Чимишник зеркало – щит – направляет лук на цель –
Лук скользит по скалам Сасуна...
Хандут – нет!
Мгер – нет!
Оленей – нет!
Давид – да!
Спущена тетива рукой ребенка!
Давид сражен! Крик Хандут!
Бегут олени...

От скал базальта – от скал Сасунских
Шли старцы-слепцы –
Сасунские безумцы...
Они взяли из рук Мгера убитого Давида...
Закрыли глаза Давиду...
... и проклинали Чимишник...
Хандут, ничего не понимая, коснулась
Холодных ног Давида – пяты!
На руках у Хандут Давид...
Хандут оплакивает мужа и отца...
Хандут умеет мстить за раны Сасуна...
Она клянется мечом Сасуна...
Хандут ведь мать Мгера и жена Давида!
Хандут – сама Давид!
И сколько матерей в печалях Сасуна?!
Зачем все в черном?
Зачем Давид на белой бурке?
Зачем накопят бури силу?

Куда уносят Давида от Хандут?!
 Зачем режут косы матери и сестры!?
 Зачем бьют землю волосами матери и сестры!?
 Зачем уносят тело Давида?!
 Кто первым начал плач над телом Давида?
 Куда ушли слепцы-безумцы Сасуна?
 Зачем окрашены кровью облака и стада?...
 Кто первым начал плач над телом Давида?
 Кто окрасил меч Сасуна снова кровью?!
 Кто...

Барельеф...
 Барельеф – о славе, мощи, красоте и силе Давида...
 Барельеф – из серебра, стали и базальта...
 Барельеф – о радостях и печалях Давида...
 Барельеф – о страстях Давида – страстях Сасуна... страстях
 Давида Сасунского...

МОВСИСЯН Цовинар Грайровна

кандидат искусствоведения, доцент,

и.о. ректора Ереванской государственной консерватории

имени Комитаса (Армения, Ереван)

tsmovsisyan@yahoo.com

НЕИЗВЕСТНОЕ ЛИБРЕТТО ОПЕРЫ-БАЛЕТА «ДАВИД САСУНСКИЙ» ЭДГАРА ОГАНЕСЯНА

Статья посвящена неизвестной странице из истории много-летней дружбы и профессионального сотрудничества композитора Эдгара Оганесяна и Сергея Параджанова – созданию либретто оперы-балета «Давид Сасунский».

Творческие личности двух художников были теснейшим образом связаны друг с другом. В результате их творческого взаимодействия,

в 1969 году родилась идея создания оперы-балета, для которой Сергей Параджанов написал либретто. Впрочем, вследствие идеологических запретов советского времени оно оставалось в архиве композитора.

Замысел создания монументальной оперы-балета, поставленной в 1976 году, стал реализацией идейно-эстетического импульса, заложенного в либретто С. Параджанова. Именно поэтому опера-балет Э. Оганесяна «Давид Сасунский» считается одним из наиболее удачных примеров музыкально-театрального воплощения национального эпоса.

Ключевые слова: Эдгар Оганесян, Сергей Параджанов, Давид Сасунский, эпос, опера, балет, либретто.

Tsovinar MOYSISYAN

*Doctor of Arts, associate professor, acting rector of the Komitas
Yerevan State Conservatory (Armenia, Yerevan)
tsmovsisyan@yahoo.com*

THE UNKNOWN LIBRETTO FOR EDGAR HOVHANNISYAN'S OPERA-BALET "DAVID OF SASSOUN"

The article presents a newly discovered chapter in the history of the long-term friendly relations and professional collaboration between the composer Edgar Hovhannisyan and film director Sergey Parajanov.

In 1969, the alliance of the two creative personalities gave rise to the idea of creating the opera-ballet *David of Sassoun*. S. Parajanov wrote the libretto, which, however, remained in the composer's archives because of the ideological restrictions in the Soviet Union.

The concept of the large-scale opera-ballet, eventually staged in 1976, was an expression of the artistic and ideological passions present in Parajanov's libretto, which is why E. Hovhannisyan's opera-ballet *David of Sassoun* is considered one of the most successful examples of musical-theatrical embodiment of the national epic.

Key words: Edgar Hovhannisyan, Sergey Parajanov, David of Sassoun, national epic, opera, ballet, libretto.